Ինչպես Կարող Է Ձեզ Օգնել Սոցիալական Ապահովությունը Ընտանիքի Անդամի Մահվան Դեպքում

Անձի մը մահը անմիջապէս տեղեկացուցէք Սոցիալական Ապահովության: Շատ դեպքերում, թաղման գրասենյակի ղեկավարը փոխանցում է Սոցիալական Ապահովության անձի մը մահվան լուռը եթե նրան հայթայթէք մահացողի Սոցիալական Ապահովության համարը:

Հանգուցյալի ընտանիքի որոշ անդամներ կարող են սոցիալական ապահովության նպաստներ ստանալ, եթե հանգուցյալը բավականաչափ երկար է աշխատել սոցիալական ապահովության ներքո, որպեսզի համապատասխանի նպաստներ ստանալու համար անհրաժեշտ պայմաններին: ***Դուք պետք է անմիջապէս կապվեք Սոցիալական Ապահովության հետ, որպեսզի ընտանիքի անդամները արագօրէն ստանան բոլոր իրավասու նպաստները:*** Խնդրվում է ուշադրությամբ կարդալ հետեւյալ տեղեկատվությունը՝ հասկնալու թե ինչպիսի նպաստներ կարող են ստացվել:

- Մեռնողի վերապրող ամուսինը կամ կինը կարող է ստանալ մի անգամ 255 դոլար եթե նա ապրում էր մահացողի հետ մահէն առաջ: Եթե վերապրող անձը բաժնված ապրել է, կրկին կարող է ստանալ այս գոումարը եթե մահացողի աշխատանքի տվյալներով ստացել է Սոցիալական Ապահովության նպաստներ: Եթե չկա վերապրող ամուսին կամ կին, վճարումը կատարվում է երեխային, որ իրավասու է մահվան ամսին մահացողի տվյալներով նպաստներ ստանալ:
- Որոշ ընտանիքի անդամներ **կարող են իրավասու լինել** ստանալու ամսական նպաստներ, ներառյալ.
  - — Այրի կին կամ ամուսին որ 60 կամ ավելի տարեկան է: Եթե նա հաշմանդամ է, 50 տարեկանում կարող է ստանալ նոյն նպաստը.
  - — Ցանկացած տարիքի այրի, որը հոգ է տանում հանգուցյալի մինչև 16 տարեկան կամ հաշմանդամ երեխայի մասին.
  - — Մահացողի ամուրի երեխան, որը.
    - Մինչև 18 տարեկան պատանին (կամ մինչև 19, եթե տարրական կամ միջնակարգ դպրոցի աշակերտ է). կամ
    - Եթե 18 տարեկանից աւելի է, սակայն 22 տարեկանից առաջ հաշմանդամ է եղել.
  - — Որոշակի հանգամանքներում՝ խորթ զավակը, թոռը, ծոռը կամ որդեգրված երեխան,
  - — Ծնողներ, որոնք 62 եւ աւելի տարեկան են, որոնց ապրուստի առնվազն կեսը մահացողը խնամում էր, ինչպես նաեւ
  - — Վերապրող ամուսնալուծված ամուսին կամ կին՝ որոշակի հանգամանքներում:

Եթե մահացողը ստանում էր Սոցիալական Ապահովության նպաստներ, դուք պետք է վերադարձնեք մահվան ամսվա եւ բոլոր հաջորդող ամիսների համար ստացված նպաստը: Օրինակ, եթե անձը մահանում է Հուլիսին, դուք պետք է վերադարձնեք Օգոստոսին վճարված նպաստը: Եթե նպաստը ուղղակի ուղարկվում էր դրամատուն, դիմեք դրամատան եւ խնդրեցեք որ մահվան ամսվա համար կամ ավելի ուշ ստացված բոլոր նպաստները վերադարձնեն Սոցիալական Ապահովությանը: Եթե նպաստները վճարվել են թղթի վճարագրով (չեկ), մի մանտրէք կամ գործածեք մահվան ամսվա համար կամ ավելի ուշ ստացված բոլոր վճարագիրները: Շտապ վերադարձրեք վճարագիրները Սոցիալական Ապահովության գրասենյակը:

Միեւնույն ժամանակ, ընտանիքի իրավասու անդամները կարող են ստանալ մահվան նպաստներ նոյն ամսվա համար, որուն մէջ նպաստառուն մահացել է:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10008-AM
How Social Security Can Help You When A Family Member Dies (Armenian)
November 2009